

ու Կաստիլյայի պատգամաւորներն « եւ զթագաւորն Հայոց, ազուցեալ նմա հանդերձս ոսկեհուռս արտակիտեալս կնգմենեաւ » (1), երկրորդել տուաւ իրենց խնդիրը՝ Երբ պատգամաւորներն հրապարակով կրկնեցին իրենց առաքելութեան պատճառը, պաղատանօք խնդրելով Լեւոնի ազատութիւնը, Բարկուկ յանուն սուլտանի ազատ արձակեց Լեւոնն եւ յանձնեց անոնց, որոնք Լեւոնի հետ միասին անհուն կերպով շնորհակալ եղան սուլտանէն եւ Բարկուկէն, միանգամայն յայտնելով իրենց երախտագիտութիւնը՝

1375 ապրիլ 16-էն մինչեւ 1382 սեպտ. 30, ետ՛քն երկար տարիներ դերութեան եւ բերդարգելութեան դատապարտուած վերջին թագաւորն Հայոց ազատ շունչ կը շնչէր այլ եւս . . .



ԺԲ

Լեւոնի ազատութենէն մինչեւ Սպանիա հասնիլը

Լեւոն իր ազատութիւնը ձեռք բերելէ ետքը բնական էր որ ա՛լ վայրկեան մը իսկ չկենար հոն, սուլտաններու երկրին մէջ. ուստի՝ սուլտանին անձնական գետնաւուրը, որ յատկապէս սարքուած պատրաստուած էր իրեն համար, վերը յիշուած պատգամաւորներու եւ իր մարդոց ընկերակցութեամբ հապճեպով ճամբայ ելաւ, եւ 1382 հոկտ. 7-ին Աղեքսանդրիա հասաւ, ուր նոյն օրն իսկ նաւ մը վարձեց(2) եւ շուտ մը հեռացաւ Եգիպտոսի ափերէն :

(1) Գառդել, Եր. 183, ուր սրբագրելի է « կնգմենեաւ » :

(2) *Cronicas de los reyes de Castilla* (հս. Բ, Եր. 136) Գառդելի նկարագրութեան (Եր. 184) հակառակ՝ կրսէ քէ Լեւոն զինք ազատելու Եկող պատմաւորներուն նաւը նստելով անոնց հետ միասին ուղղակի Ալիքնոն գնաց. « E vinose en aquella galea en que los Mensageros iban. »